

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ԷԹՆՈՂՈԳԻԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐԻՑ

Ա. Ա. ՆԱԼՉԱԶՅԱՆ

Հայտնի է, որ սոցիալական խմբերի, ներխմբային և միջխմբային փոխ-հարաբերությունների ուսումնասիրությունը զբաղվում են սոցիոլոգիան և հատկապես սոցիալական հոգեբանությունը՝ ժամանակակից հոգեբանության կարևորագույն և բուռն զարգացում ապրող բնագավառներից մեկը: Մարդկային հանրույթների (խմբերի) առավել կայուն և մարդկության կյանքում էական դեր կատարող տեսակներից մեկը էթնիկական խումբն է, որն, իր հերթին, ունի մի շարք ենթատեսակներ: Այս խմբերի սոցիալ-հոգեբանական հետազոտությունների շնորհիվ ձևավորվում է մի նոր գիտություն՝ էթնիկական հոգեբանությունը: Այն ծագել է անձի և սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի, ազգագրության և այլ գիտությունների հատման տեղում և կոչված է լուծելու մարդկությանը հուզող շատ խնդիրներ: Այդ խնդիրներից մի քանիսի համառոտ քննարկմանն է նվիրված ներկա հոդվածը: Այստեղ մենք շենք սահմանափակվելու միայն էթնիկական հոգեբանության մասին պատկերացում տալով, այլ կառաջարկենք նաև նոր մոտեցում, որը, մեր կարծիքով, այդ գիտության բնագավառում կարող է շատ արդյունավետ լինել:

1. էթնիկական խմբեր

«էթնոս» կամ «էթնիկական խումբ» հասկացությունների ծագման և զարգացման պատմությունը մանրամասնորեն շարադրված է մասնագիտական դրականության մեջ¹, այդ պատճառով էլ այստեղ կխոսենք միայն դրանց ժամանակակից ըմբռնումների մասին: էթնոսը մարդկային այնպիսի հանրույթ է, որն ունի հետևյալ հիմնական առանձնահատկությունները. 1) Ընդհանուր կենսաբանական ծագում: Խմբի բոլոր անդամները կամ գոնե մեծամասնությունը համոզված է, որ իրենք սերված են ընդհանուր նախնիներից: 2) Ընդհանուր պատմական ճակատագիր: 3) Ընդհանուր տարածք, որտեղ ընթացել է տվյալ ազգի ձևավորումը, և որտեղ այժմ ընթանում է նրա կենսագործունեությունը: 4) Ընդհանուր պետականությունը, պետականության այս կամ այն տեսակը, որն ընդգրկել է տվյալ էթնոսն ամբողջությամբ կամ նրա հիմնական մասը: 5) Ընդհանուր մշակութային ավանդույթներն ու նույնականության (իդենտիֆիկացիայի) զգացումը:

Անհրաժեշտ է նշել, որ որոշ հետազոտողներ էթնոսի բնորոշ հատկանիշ են համարում նաև ընդհանուր կրոնը: Դա հատկապես բնորոշ է մուսուլման, մասնավորապես թուրք հետազոտողներին, որոնց մի զգալի մասը պանիսլա-

¹ Մանրամասն տե՛ս Ю. В. Бромлей, Очерки теории этноса, М., 1983, էջ 16—17:

միզմի շատագուցներ են²: Եվ դա հասկանալի է, քանի որ մինչև իսլամի ընդունումը և դրանից երկար ժամանակ անց թուրքերը դեռևս ազգ չէին դարձել: Ըստ թուրքագետների, թուրք ազգի ձևավորումը ավարտվեց միայն 20-րդ դարի առաջին կեսին:

Պետք է նկատի ունենալ, որ ազգին բնորոշ այդ հատկանիշներից յուրաքանչյուրն իր հերթին բարդ է, իր կազմում ունի մի շարք մասնավոր հատկանիշներ կամ հանգեցնում է լրացուցիչ հատկանիշների առաջացման: Օրինակ, էթնիկական խմբի անդամների ընդհանուր ծագումը հանգեցնում է մի շարք մարդաբանական և հոգեֆիզիոլոգիական գծերի առաջացման: էթնիկական խմբերի բնորոշ գծերի խմբի մեջ են մտնում նաև մշակույթի և ավանդույթների առանձնահատկությունները, հատկապես լեզուն:

Ժամանակակից գիտական գրականության մեջ սկսել են օգտագործել նաև «էթնիկական պոպուլյացիա» հասկացությունը՝ նկատի ունենալով այնպիսի սարգկանց խումբ, ովքեր ունեն վարքի բավականին մեծաթիվ ընդհանուր գծեր:

«էթնիկական խումբ» հասկացությունը շատ ավելի լայն է իր բովանդակությամբ, քան «ազգ» հասկացությունը: էթնիկական խմբեր են տոհմերը (որոնցից կարող են ցեղեր և ազգեր ծագել), ցեղերն ու ազգերը: Յուրաքանչյուր ազգ պատմական երկարատև զարգացման արդյունք է, ընդ որում բոլոր էթնիկական խմբերը չէ, որ հասնում են ազգի մակարդակին:

Այս հանգամանքներն աչքի առաջ ունենալով՝ պետք է ասել, որ ազգային բնավորություն հասկացությունն այնքան էլ հաջողված չէ: Առավել ևս, որ այնպիսի հասկացություններ, ինչպես օրինակ, «ազգային շահեր», «ազգային քաղաքականություն» և այլն, հաճախ օգտագործվում են «պետական»-ի իմաստով: «Ազգություն» ասելով Արևմուտքում սովորաբար նկատի ունեն քաղաքացիությունը (հպատակությունը): Եթե նկատի ունենանք նաև «ժողովուրդ» հասկացության գոյությունը, որը հաճախ օգտագործվում է «ազգ»-ի փոխարեն, ապա տերմինարանական շփոթն ավելի ակնառու կդառնա:

Մեր կարծիքով «էթնիկական խումբ» հասկացությունը պետք է տարբերել նաև «էթնիկական նույնացում» (էթնիկական իդենտիֆիկացիա) հասկացությունից: Գրականության մեջ այս հարցում որոշ անորոշություն կա: Խնդիրն այն է, որ, ինչպես տեսանք, յուրաքանչյուր էթնիկական խումբ ունի որոշ թվով օբյեկտիվ առանձնահատկություններ, որոնք կարող են նկարագրվել ոչ միայն նրա անդամների, այլև ուրիշ խմբերի ներկայացուցիչների կողմից: Մակայն էթնիկական խմբի գոյության էական կողմերից մեկն այն է, թե նրա անդամներն ինչ շահով, հոգեկանի տիրույթի որ մակարդակում և ինչ հատկանիշներից ենթելով են իրենց տվյալ խմբի անդամներ համարում: Խոսքն, այսպիսով, էթնիկական խմբի և նրա մշակույթի հետ խմբի անդամների ճշգրիտ և անկասկածաբար կապը կամ, պարզապես, անձի էթնիկական նույնացման մասին է. ի՞նչ շահով և ըստ ի՞նչ գծերի է տվյալ անձն իրեն այդ էթնիկական խմբի անդամ համարում: Իհարկե, հնարավոր է նաև էթնիկական նույնացման այլ ըմբռնում, օրինակ այսպիսին. հետազոտողը, հանդիպելով մարդկային որևէ հանրույթի, ինչ հատկանիշներից ենթելով է նրանց որոշակի էթնիկական խմբի մեջ մտցնում կամ այդ հանրույթն էթնիկական համարում: Լիստեղ մենք ցանկանում ենք խոսել այդ ըմբռնումներից առաջինի որոշ կողմերի մասին, ըմբռնում, որն ըստ էության սոցիալ-հոգեբանական բնույթ ունի:

էթնիկական նույնացումը հիմնված է էթնոսի այնպիսի առանձնահատկությունների կամ այնպիսի գործոնների վրա, ինչպիսին են լեզուն, կրոնը,

² Տե՛ս Դ. Ե. Երեմև, Этногенез турок, М., 1971, էջ 35:

ընդհանուր ծագումը և ազգային պետականությունը, արժեքային կողմնորոշումները, կենսաոճը, կանոնադրական սոցիալական հիմնարկները, տարածքային և կազմակերպական սահմանազատվածությունը և այլն: էթնոսի առանձնացման գործում կարևոր են նրա ռասայական առանձնահատկությունները, մասնավորապես ֆիզիկական հատկանիշները (մաշկի գույնը, գլխի ձևը, մազերը և այլն): Սակայն պետք է նշել, որ այս բնագավառում ռասայի և էթնիկական խմբի հարաբերության խնդիրը դեռևս վիճարարության առարկա է, և բալորը չէ, որ համաձայն են էթնիկական ընդհանրության հիմքում տեսնել նաև ռասայական ընդհանրություն: Որպես էթնիկական նույնացման գործոններ հիշատակվում են նաև էթնիկական ինքնագիտակցությունը, բնտանիկական հարաբերությունների յուրահատկությունները, տարածքային-կազմակերպական առանձնացվածությունը:

Իսկ իրենք՝ էթնոսի անդամները, ինչպես՝ են ընկալում այդ առանձնահատկությունները, ինչպես են զգում կամ գիտակցում, որ տվյալ էթնոսի անդամներ են: Տարբեր հեղինակներ ընդգծել են անձի էթնիկական նույնացմանը մասնակցող տարբեր գործոններ: Ընդհանրացնելով գոյություն ունեցող տեսակետները՝ կարելի է ասել, որ էթնիկական հոգեբանական նույնացման հիմնական դրսևորումներն են. «մենք»-ի զգացումը, մարդկային որոշակի տիպի պատկանելու մասին պատկերացումը, խմբի հետ համերաշխությունը, խմբի մշակույթի ընդունումը և խմբային գործունեությանը մասնակցելը, խմբային (էթնիկական) տիպը պահպանելու ձգտումը, խմբի մյուս անդամների հետ միասին ընդհանուր ծագման գիտակցումը (որը կարող է լինել ինչպես օբյեկտիվ իրականության արտացոլում, այնպես էլ հնարավոր պատկերացում), խմբային սիմվոլների ընդունումը, խմբի մյուս անդամների դիսհատականի և սեփական ինքնագնահատականի որոշ էական ընդհանրություններ:

Մեր համոզմամբ, չափազանց կարևոր են ընդհանուր ծագման մասին պատկերացումն ու հավատը: Այս առումով շատ հետաքրքրական է գերմանացի սոցիոլոգ Մաքս Վեբերի տեսակետը, որն էթնիկական խմբերին փաստորեն հոգեբանական բնորոշում է տալիս, երբ այդպիսին է համարում մարդկային այն հանրույթները, որոնք իրենց ծագման մասին սուբյեկտիվ հավատ ունեն, ընդ որում նրանց հավատը հիմնված է ֆիզիկական նմանության, սովորությունների նմանության, ինչպես նաև տվյալ տարածքի համատեղ բնակեցման կամ զաղխի մասին պատմական հիշողության վրա³:

էթնիկական խմբերի միաժամանակ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ լինելու մասին խոսել են նաև Թ. Շիրուաունին և Կ. Կվանը, որոնք ժամանակակից էթնոհոգեբանության բնագավառի ճանաչված ներկայացուցիչներ են⁴: Նրանք ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ էթնիկական կատեգորիաները սուբյեկտիվ չեն, մարդիկ իրենց չեն կարող ներկայացնել ինչպես ցանկանան: Դրանք օբյեկտիվ են, քանի որ իրենցից ներկայացնում են մեծաթիվ մարդկանց ընդհանուր ու կայուն համոզմունքներ և գոյություն ունեն առանձին անհատներից անկախ:

Որոշ երկրներում էթնիկական խմբերի տարբերակման չափանիշներ են համարվում ժառանգական («ռասայական») հատկանիշները, օրինակ մաշկի գույնը (սպիտակամորթ, սևամորթ, դեղնամորթ): Միջին Արևելքի երկրներում մաշկի գույնին ավելի քիչ նշանակություն է տրվում: Օրինակ, արաբներին,

³ Weber M., Economy and Society. New York, 1968. Vol. I, Cap. 5, p. 389, IO. B. Бромлей, Очерки теории этноса, с. 19.

⁴ Shibutani T. and Kwan K. M., Ethnic Stratification: A Comparative Approach. New York, 1965, p. 47.

Հայերին, ասորիներին, քրդերին և այլ ազգերի ներկայացուցիչներին իրարից տարբերում են ոչ թե ըստ մաշկի գույնի, այլ ըստ լեզվի և կրոնի: Հաշվի են առնվում նաև մշակութային, մասնավորապես կենցաղային այլ առանձնահատկություններ, սովորույթներ և ավանդույթներ:

Ըստ մարդկանց առօրյա պատկերացումների, էթնիկական տարբերանշանները բնական են, մարդկությունը կազմող խմբերի տարբերակման բնականոն միջոցներ են: Սակայն գիտական մոտեցման դեպքում մենք տեսնում ենք, որ դրանք կամայական են: Ահա թե ինչու էթնիկական հոգեբանները քրննարկում են այն հարցը, թե էթնիկական խմբերն արդյո՞ք սուբյեկտիվ, թե՞ օբյեկտիվ երևույթներ են: Նույնանման հարց քննարկվում է նաև դասակարգերի վերաբերյալ: Նշվում է, որ էթնիկական կատեգորիաները սուբյեկտիվ են այնքանով, որքանով գոյություն ունեն միայն մարդկանց մտքերում, բայց սուբյեկտիվ չեն այն իմաստով, որ յուրաքանչյուր անձ կարող է պատկերացնել, թե ինքն ինչպիսին է: Այդ կատեգորիաներն օբյեկտիվ են այն իմաստով, որ ընդունվում են մեծաթիվ մարդկանց կողմից, կայուն պատկերացումներ են և կախված չեն առանձին անդամների ցանկությունից: Սոցիալական յուրաքանչյուր հանրույթում մարդկանց դասակարգումը համաձայնության հարց է, և յուրաքանչյուր անհատ պետք է հարմարվի իր շրջապատին: Նշենք, որ այս տեսակետը բավականին հետաքրքրական է և թույլ է տալիս հարցը հետազակոնկրետ քննարկման առարկա դարձնելիս օգտագործել անձի և խմբերի ադապտիվ մեխանիզմների մասին ժամանակակից պատկերացումները:

Այդ քննարկումից հետո Ք. Շիբուտանին և Կ. Կվանը առաջարկում են էթնիկական խմբի հետևյալ սահմանումը. էթնիկական խումբը կազմված է այնպիսի մարդկանցից, ովքեր իրենց միմյանց նման են համարում ընդհանուր նախնիներ ունենալու շնորհիվ (լինի դա իրական, թե երևակայական պատկերացում), և ովքեր այլ էթնոսների ներկայացուցիչների կողմից ևս այդ կերպ են ընկալվում:

Այս սահմանման օգտակարությունը հեղինակները ցույց են տալիս հրեաների օրինակով, որոնք արտաքինով իրարից խիստ տարբերվում են՝ ավելի շատ նմանվելով այն ազգերին, որոնց միջավայրում ապրում են: Մեր օրերում, օրինակ, Իսրայել ներգաղթողների միջև ըստ արտաքին տեսքի հսկայական տարբերություններ կան: Բայց նրանք բոլորն էլ պնդում են, որ իրենք հրեաներ են: Կրոնական տարբերությունները ևս բավականին մեծ են. կան մեծաթիվ անաստվածներ, կան նաև հուդայականության տարբեր ճյուղերի (սխիզմաների) պատկանողներ:

Հրեաներն իրենք իրենց ընկալում են նաև որպես ընդհանուր նախնիներ ունեցողներ, նրանց մասին այդպես են մտածում նաև օտարները: Համեմատաբար մեկուսացված դաղույթներում հրեաները մշակում են վարքի ու արտաքինի որոշ ընդհանուր պծեր և դրանք մեկնաբանում են որպես ժառանգական: Բայց հրեական գաղութները ցրված են աշխարհով մեկ, և դրանցից յուրաքանչյուրում նրանք ունեն մշակութային տարբերություններ: Նրանք մեծ շափով ներգրավվում են յուրաքանչյուր երկրի հիմնական բնակչության մշակութային կյանքի մեջ և հաճախ նրանցից ֆիզիկապես ու ըստ մշակույթի չեն տարբերվում: Հրեաները հաճախ ասում են, թե իրենց որոշ նախորդներ հրեաներ են եղել, և հստակ էթնիկական նույնացում չունեն: Նրանց մեջ նման իդենտիֆիկացիա սկսում է ձևավորվել միայն այն դեպքում, երբ հակահրեական տրամադրությունների, հակասեմիտիզմի դրսևորումների են հանդիպում: Այդ կարգի հրեաներից շատերն անհետացել են և այժմ էլ ձուլվում և անհետա-

նում են տիրապետող մեծաթիվ ազգերի մեջ: Ահա թե ինչու անձի էթնիկական ինֆլուենցիաները հարցի անկյունաքարն է⁵:

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր հարցերը վերաբերում են նաև հայերին ու հայկական սփյուռքին և պետք է ուսումնասիրվեն: Եթե մենք ապահովենք սփյուռքահայերից յուրաքանչյուրի էթնիկական ինֆլուենցիաները, ապա սփյուռքը երկար ժամանակ կպահպանվի ու կնպաստի ազգային մեծ խնդիրների լուծմանը: Տարբեր գաղութներում հայերի մեջ առաջացող մշակութային, վարքային և մարդաբանական տարբերություններին միանում են նաև նրանք, որոնք եղել են ու կան պատմական Հայաստանի տարբեր գավառներից դուրս եկած հայերի միջև:

էթնիկական նմանություններն ու տարբերությունները հաշվի են առնվում մարդկային գրեթե բոլոր տեսակի փոխհարաբերություններում, թեև կուլ և ենթագիտակցորեն: Ահա թե ինչու էթնիկական հոգեբանությունը կոչված է նաև պարզելու, թե որոնք են հաղորդակցման այն բնույթը ձևերը, որոնք դիտվում են այն մարդկանց միջև, ովքեր իրենց ըստ էթնիկական պատկանելիության տարբեր են համարում, այսինքն ունեն էթնիկական տարբեր ինֆլուենցիաներ:

2. էթնոհոգեբանության խնդիրները, մեթոդներն ու ուղղությունները

Նախորդ շարադրանքը մեզ թույլ է տալիս ավելի հստակորեն բնութագրել էթնիկական հոգեբանության առարկան և խնդիրները, այսինքն այն, թե ինչ է ուսումնասիրում այդ գիտությունը և ինչ մեթոդներով:

Այս հարցերին պատասխանելու համար պետք է նկատի առնել, որ մարդկային յուրաքանչյուր հանրույթ երկարատև գոյության ընթացքում ձևեր է բերում խմբային հոգեբանական գծեր: Քանի որ էթնոսը, մասնավորապես ազգը, նույնպես սոցիալական խումբ է և այն էլ երկարատև ժամանակահատվածներում գոյություն ունեցող (հաճախ դարեր և հազարամյակներ), ապա հասկանալի է, որ անխուսափելիորեն պետք է ստանար իրեն հատուկ հոգեկան գծեր և այդպիսի գծերի զուգորդություններ, հոգեբանական բարդույթներ, եթե ընդհանուր ձևով ասելու լինենք՝ խմբային հոգեկան կամ «հոգեբանություն»:

Այսպիսով, ազգային հոգեկանի մեջ մտնում են այն բոլոր հոգեֆիզիոլոգիական, անձնային և սոցիալ-հոգեբանական գծերը, որ տվյալ էթնիկական խումբը ձևեր է բերում իր ծագման (էթնոգենեզի սկզբնավորման) և հետագա զարգացման ուղջ պատմության ընթացքում: Թեև էթնոսի մեջ մտնող անձինք սահմանափակություններ են, այսինքն՝ ունեն իրենց յուրահատուկ գծերն ու դրանց զուգորդությունները, այնուամենայնիվ մենք տեսնում ենք, որ յուրաքանչյուր էթնիկական խումբ ունի նաև իր բոլոր անդամներին, հատկապես ֆիզիոլոգիական և տարիքային առումով հասուն անդամներին հատուկ ընդհանուր գծեր՝ բնավորության հատկություններ և բարդույթներ, վարքի կայուն և բնորոշ ձևեր՝ ստերեոտիպեր, ընդհանուր նպատակներ և պատկերացումներ (մասնավորապես սեփական էթնոսի ծագման և պատմության մասին): էթնիկական խումբն ունենում է նաև ընդհանրացված ինքնազնահատական, ընդհանուր դիրքորոշումներ՝ այլ խմբերի և սոցիալական արժեքների նկատմամբ, բնության և հասարակության երևույթներին տրվող գնահատականներ, արժեքային կողմնորոշումներ և այլն: Դրանք ընդհանուր, էթնիկական երևույթներ

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 47—48:

են այն իմաստով, որ ընդունվում ու դրսևորվում են տվյալ էթնոսի անդամների մեծամասնության կողմից: Իհարկե, միշտ էլ գտնվում են սեփական էթնոսից, ազգից օտարված անձնավորություններ, ովքեր ցածր են գնահատում իրենց ծնող աղգի մշակույթն ու ասրելակերպը, շին ընդունում վարքի նորմերն ու ստերեոտիպերը և նույնիսկ հեռանում են նրանից: Հոգեկան օտարվածությունը հաճախ հանգեցնում է ոչ միայն հոգեբանական, այլև ֆիզիկական հեռավորության մեծացման, տվյալ էթնոսից փախչելու ստրատեգիայի: Ընկալն էթնիկական խումբը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ նրա անդամները մնում են նրա կազմում, բարձր են գնահատում նրա արժեքներն ու մշակույթը և հոգեբանորեն նույնանում են նրա հետ, նույնիսկ հպարտ են իրենց էթնիկական պատկանելության համար:

Այսպիսով, էթնիկական հոգեբանություն կոչվող գիտությունն ուսումնասիրում է էթնիկական խմբի հոգեբանական առանձնահատկությունները: Եթե կոնկրետացնենք այս սահմանումը, ապա կարող ենք թվարկել մի շարք առավել էական խնդիրներ, որ կոչված է լուծելու այս նոր գիտությունը: Դրանցից են, օրինակ, հետևյալները. ի՞նչ է ազգային (էթնիկական) խմբի կերտվածքը և ինչպես, ինչ փուլերով է այն ձևավորվում, ի՞նչ օրինաչափություններ են գործում ազգային հոգեբանական կերտվածքի առաջացման ընթացքում, ի՞նչ է ազգային բնավորությունը և ինչ բաղադրիչներից է կազմված: Ըստ հոգեբանական կերտվածքի և բնավորության՝ տարբեր ազգերի միջև ինչպիսի՞ տարրերություններ կան: Տվյալ աղգի մեջ ինչպիսի բնորոշ տղամարդկային և կանացի տիպեր կան, այսինքն, օրինակ, ինչպիսի՞ն է տիպական, բնորոշ, «իսկական» հայ կինը, և ինչպիսին պետք է լինի իսկական հայ տղամարդը, ինչ հիմնական ֆիզիկական և հատկապես հոգեկան դժերով են նրանք տարբերվում այլ ազգերի բնորոշ ներկայացուցիչներից:

Հայտնի է, որ յուրաքանչյուր ազգ որոշակի պատկերացումներ ունի և՛ իր, և՛ այլ ազգերի մասին: Ինչպե՞ս են առաջանում այդ պատկերացումները, և ի՞նչ կառուցվածք ունեն դրանք: Խոսքն այստեղ սեփական և այլ ազգերի մասին ստերեոտիպ պատկերացումների, բայց նաև այնպիսի մի կարևորագույն խնդրի մասին է, ինչպիսին ազգային ինֆեռագիտակցությունն է: Ինչպե՞ս է այն ձևավորվում և ինչ կառուցվածք ունի, նրա վրա ինչպիսի ազդեցություն են գործում այլ էթնիկական խմբերի ներկայացուցիչների կողմից տրվող դրական և բացասական գնահատականները: Շատ կարևոր է նաև իմանալ, թե ազգի և նրա ղեկավարների վարքի վրա ինչպես են ազդում էթնիկական ինքնագնահատականն ու այլ ազգերին տրվող գնահատականները, որոնց հետ տվյալ ազգը մտնում է փոխհարաբերությունների մեջ:

Ազգային հոգեբանության համակարգում զգալի տեղ են գրավում և մանրակրկիտ ուսումնասիրություն են պահանջում ազգային սիմվոլները (խորհրդանշաններ): Դրանք այն պատկերացումներն են, բնության, մշակութային երևույթների պատկերներ, որոնցով տվյալ ազգը տարբերվում է այլ ազգերից, և որոնց մեջ խտացված են տվյալ ազգին բնորոշ հոգեկան հատկություններն ու աշխարհընկալումը: Այս կարևոր խնդիրն առանձին ու մանրակրկիտ քննարկում է պահանջում:

Յուրաքանչյուր ազգ, որպես միաժամանակ էթնիկական և սոցիալական մեծ խումբ, պետք է կառավարվի և իսկապես լավ թե վատ կառավարվում է իր առաջնորդների, լիդերների կողմից: էթնիկական խմբի կառավարումն ավելի հստակ ու որոշակի ձևեր է ընդունում ազգային պետականության ստեղծման մակարդակում: Մենք գտնում ենք, որ ազգերից յուրաքանչյուրին բնորոշ կառավարման ձևերն ինչ-որ շափով սրտացույցում են նրա հոգեբանական առանձնահատկությունները, և, մյուս կողմից, կառավարման ձևերն ու ոճը,

հրենք հերթին, ազգային հոգեբանությունն ձևավորող հզոր գործոններ են: Այս ինդիկոնների, ինչպես նաև ազգային լիդերների անձնային տիպերի ուսումնասիրությունները պետք է իրենց արժանի տեղը դրավեն էթնիկական հոգեբանության մեջ:

Ազգային հոգեկան կերտվածքը, անցյալ սիրունդների ապրումները, մշտ-
քները, սահղծագործությունը և փոխհարաբերությունների հոգեբանական յու-
րահատկությունները ինչ-որ շափով մտնում են նրա մշակույթի (պատմագրու-
թյան, փիլիսոփայության, լեզվի, գեղարվեստական դրականության, արվես-
տի, ժողովրդական բանահյուսության) մեջ: Հետևաբար մշակույթի ուսումնա-
սիրությունն ու նրա մեջ ամրապնդված հոգեբանական բովանդակությունների
բացահայտումը ազգային հոգեբանության զարգացման հիմնական ուղիներից
մեկն է: Շատ էական է նաև կրոնի և ազգային հոգեբանության փոխներդոր-
ծության ուսումնասիրությունը, այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք կրո-
նական հավատը կարելի է էթնիկական հատկանիշ համարել: Սա մի խնդիր է,
որն ինքնին հսկայածավալ ուսումնասիրություններ և վերլուծական մեծ աշ-
խատանք է պահանջում:

էթնիկական հոգեբանությունն ունի մի շարք կիրառական կողմեր. ժա-
մանակի ընթացքում, երբ այս դիտությունն աստիճանաբար ընդլայնի իր հե-
տազոտությունների շրջանակները, նրանում կձևավորվեն կիրառական բնա-
գավառներ, ինչպես դա կատարվում է զարգացած գիտությունների դեպքում:
Ընկալական և այլ ազգերի հոգեկան կերտվածքի իմացությունը կարող է ծա-
ռայել մի շարք գործնական նպատակների, որոնցից են. ա) հնարավոր կլինի
աճելի ճշգրիտ պատկերացում կազմել այն մասին, թե որ էթնոսներն են մեր
իրական և պոտենցիալ հակառակորդներն ու թշնամիները: Կասկած չկա, որ
թշնամու թերությունների և առավելությունների իմացությունը կօգնի նրան
հաղթելու, շեղոթացնելու կամ նույնիսկ բարեկամ դարձնելու գործում: բ) Ազ-
գային հոգեբանական կերտվածքի և բնավորության իմացությունը թույլ է
տալիս ճիշտ կազմակերպել և ներքին, և արտաքին քաղաքական, ռազմական,
կրոնական պրոպագանդան, ճիշտ կազմակերպել ու կառավարել հոգեբանա-
կան պատերազմի ընթացքը, որն էթնիկական խմբերի մրցակցության և կոնֆ-
լիկտների պայմաններում անխուսափելի է: գ) էթնոհոգեբանական գիտելիք-
ները թույլ են տալիս արդարացնել մեր դիրքորոշումները այլ էթնոսների նը-
կատմամբ, փոխել դրանք, ձևափոխման ենթարկել կամ վերացնել ստերեո-
տիպ պատկերացումները: դ) Այդ գիտելիքները թույլ են տալիս կանխատեսել
այլ էթնիկական խմբերի և նրանց լիդերների գործողությունները որոշակի
պրորելմային իրադրություններում: ե) էթնիկական հոգեբանությունը մեծ ա-
նելիքներ ունի ռազմական պործի (բանակի ստեղծման, ռազմական կազմերի
սպարաստման, ռազմական հոգեբանության ձևավորման ու դասավանդման,
ռազմական պրոպագանդայի և ագիտացիայի) բնագավառում: էթնիկական
հոգեբանության ռազմական կիրառությունների հնարավորության մասին դեռ-
ևս 19-րդ դարում նկատառումներ են հայտնել գերմանացի հեղինակներ ֆոն
Բինդեր-Կրիգելշտեյնը, ֆոն Լիխտենշտեյնը, իսկ երկրորդ համաշխարհային
պատերազմի նախօրյակին՝ գերմանացի այլ հեղինակներ: Այլ ազգի հոգեկան
յուրահատկությունների իմացությունը զենք է, որը կարելի է օգտագործել ռազ-
մական և քաղաքական նպատակների հասնելու համար: Ահա թե ինչու մենք
կարծում ենք, որ կիրառական էթնիկական հոգեբանության բնագավառում
ձեռք բերված արդյունքները չի կարելի անմիջապես հրատարակել, հատկա-
պես երբ ազգը կոնֆլիկտային հարաբերությունների մեջ է գտնվում իր հա-
րեանների հետ: զ) էթնոհոգեբանական գիտելիքներն օգտագործվում են նաև
սոցիոլոգիական պրոպագանդայում, այսինքն՝ սեփական ազգի ապրելակերպը

ւրոպագանդելիս: Ուրիշ ժողովրդի «հոգին» իմանալը թույլ է տալիս գտնել նրա մեջ թափանցելու ուղիներ, համապատասխան պրոպագանդիստական նյութեր պատրաստել, գտնել մարդկանց դիրքորոշումները փոխելու համապիտանի եղանակների էթնիկական տարբերակներ, դրանց օգտագործման լավագույն եղանակներ:

Ազգային հոգեբանության այդ և բազմաթիվ այլ խնդիրների ուսումնասիրության համար պետք է իմանալ, թե ինչպես, ինչ եղանակներով կարելի է փաստեր ստանալ դրանց մասին: Այլ կերպ ասած՝ պետք է ունենալ էթնո-նոգեբանական հետազոտությունների մեթոդներ: Քանի որ էթնոհոգեբանությունը ծագել ու զարգանում է անձի և սոցիալական հոգեբանության, ինչպես նաև ազգագրության հիման վրա, ապա ներկայումս էթնոհոգեբանական ուսումնասիրությունները կատարվում են այդ գիտությունների մեթոդներով, դրանք որոշ շահով հարմարեցնելով այն օբյեկտների յուրահատկություններին, որոնք տվյալ դեպքում հետաքրքրում են հետազոտողներին: Հետևաբար բնական է, որ էթնիկական խմբերն ուսումնասիրելիս օգտագործում են դիտման, հարցաթերթերի, գիտափորձի, զրույցի, տեսերի, գործունեության արդյունքների հոգեբանական մեկնաբանության և այլ մեթոդներ:

Հսկայական քանակությամբ արժեքավոր նյութ կարելի է ստանալ տարբեր էթնիկական խմբերի պատմությունը և մշակույթը հոգեբանական վերլուծության եթարկելու ճանապարհով: Շատ արդյունավետ կարող է լինել յուրաքանչյուր ազգի առավել ակնազարկ ներկայացուցիչների անձի և գործունեության հոգեբանական վերլուծությունն ու մեկնաբանությունը, քանի որ, մեր կարծիքով, նման անձինք, ազգային սիմվոլիկների նմանությամբ, իրենց մեջ խտացնում են տվյալ ազգի ինչպես դրական, այնպես էլ բացասական գծերը: էթնոհոգեբանական դիմանկարների (պերսոնալիաների) ստեղծումը գիտական և մշակութային լուրջ խնդիր է, և մենք՝ հայերս, ցավոք, այս բնագավառում խիստ հետ ենք մնացել որոշ առաջավոր ազգերից:

Ինչպես տեսնում ենք, ազգային հոգեբանության խնդիրները բազմաթիվ են և շփագանց հետաքրքրական: Ընդ որում, էթնոհոգեբանության խնդիրների նկատմամբ մեր դիրքորոշումը կարճ կարելի է բնութագրել որպես աղապտիվ մոտեցում, որի մասին մանրամասնորեն կխոսենք հաջորդ բաժնում:

Այստեղ ևս մեկ անգամ նշենք, որ էթնոհոգեբանությունը ձևավորվում է մի շարք գիտությունների «հատման կետում»: Դրանցից են. սոցիալական հոգեբանությունը (որոշ հետազոտողներ էթնոհոգեբանությունը նույնիսկ սոցիալական հոգեբանության մի ճյուղն են համարում)⁶, անձի հոգեբանությունը, ազգագրությունը (ոմանք նույնիսկ գտնում են, որ էթնոհոգեբանությունն այժմ ու այլ ինչ է, քան «հոգեբանականացված ազգագրություն»), սոցիոլոգիան, հոգեբուժությունը, գենետիկան և այլ գիտություններ: Ինչպես հայտնի է գիտության պատմությունից, գիտությունների նման առնչություններն ու փոխներթափանցումները միշտ հղի են նոր հայտնագործություններով:

Այժմ մի քանի խոսք էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական ուղղությունների մասին: Թեև էթնիկական հոգեբանությունը նոր գիտություն է, բայց նրանում արդեն նշմարվում են հետազոտությունների մի շարք ուղղություններ: Այս հարցի վերաբերյալ տվյալներն ընդհանրացրել է, օրինակ, ռուս էթնոհոգեբան Ս. Ի. Կորոլյովը⁷, և մենք այստեղ հիմնականում կներկայացնենք էթնոհոգեբանության ուղղությունների նրա նկարագրությունը:

⁶ Տե՛ս օրինակ, С. И. Королев, Вопросы этнопсихологии в работах зарубежных авторов. М., 1970. էջ 15:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 23—24:

Սոցիոլոգիական ուղղություն: Այս ուղղության շրջանակներում ուսումնասիրվում են մարդկային հանրույթների հոգեբանական կերտվածքի ձևավորման սոցիալական հիմքերը: Դա վերաբերում է նաև այն խմբերին, որոնք ստեղծվում են մարդկանց էթնիկական հատկանիշների հիման վրա: Մենք կարծում ենք, որ ավելի լավ կլինի այս ուղղությունն անվանել սոցիալ-հոգեբանական:

Էկոլոգիական ուղղությունը ներկայացնող գիտնականները փորձում են պարզել էթնիկական հանրույթի վրա աշխարհագրական պայմանների, և հատկապես բնակլիմայական գործոնների ազդեցությունը: Պետք է ասել, որ այս խնդիրը վաղուց է հետաքրքրել մտածողներին (Մոնտեսկյո, Հելվեցիուս, Հեգել, Ա. Ղուբրուդտ և այլք):

Կենսաբանական անվանում են էթնոհոգեբանական ուսումնասիրությունների այն ուղղությունը, որտեղ ուսումնասիրվում են էթնիկական խմբի անդամներին բնորոշ ֆիզիկական (մարդաբանական) տիպը, խառնվածքը, զգայություններն ու ընկալումները և այլ ֆիզիոլոգիական ու հոգեֆիզիոլոգիական հատկություններ:

Ելնելով ուսումնասիրվող երևույթների բնույթից՝ այդ ուղղությունն ավելի հիշտ կլինի անվանել հոգեֆիզիոլոգիական և մարդաբանական: Այս ուղղությամբ հետազոտություններ կատարողներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում այն բնածին և ժառանգական գծերի վրա, որոնք վերաբերում են հոգեկանի ոլորտին և արտաքին գործոնների ազդեցությանը քիչ են ենթակա: Այս ուղղության դարգացումը, որը կապված է մեծ բարդությունների հետ, Բույլ կտա բնագիտական հիմքեր ապահովել էթնոհոգեբանության համար:

Հիշատակենք այս կարևորագույն բնագավառի մի շարք պրոբլեմներ: Դրանցից առաջինը ռասայականի և էթնիկականի բնույթի և հարաբերության պրոբլեմն է: Հիմնական դիտարկումը, որը պետք է ելման կետ ծառայի կոնկրետ հետազոտությունների համար, այն է, որ միևնույն էթնոսի կազմում հանդիպում են ռասայական տարբեր հատկանիշներ ունեցող անհատներ: Օրինակ, թյուրքական ցեղերի մեջ կան այնպիսիները, որոնք բացահայտ մոնղոլական դծեր ունեն, բայց կան նաև ֆենոտիպի մակարդակում նման գծերից ազատ բազմաթիվ անհատներ և խմբեր: Հայերի մեջ ևս, թեև հիմնական զանգվածը արմենոիդներ են, սակայն հանդիպում են նաև մոնղոլական գծեր ունեցող անհատներ: Ինչպես իրավացիորեն նշում է Ս. Ի. Կորոլյովը, «... ռասայական և էթնիկական սահմանները հաճախ չեն համընկում և... մեկ էթնիկական հանրույթի մեջ, հատկապես առանձին ռասաների բնակեցման տարածքների հանդիպման տեղերում, կարելի է նկատել ռասայական մի շարք բաղադրիչներ»:

Կենսաբանական ուղղության շրջանակներում պետք է ուսումնասիրվեն տարբեր էթնոսների և ռասաների պատկանող մարդկանց տարբերություններն ըստ խառնվածքի, ընդունակությունների և այլ կենսահոգեբանական գծերի, ըստ մի շարք ժառանգական հատկանիշների:

Հետազոտողները գտնում են, որ մարդկությունը մի շարք ռասաների բաժանելը ազգային բնավորության ուսումնասիրության համար էական նշանակություն չունի, նախ՝ այն պատճառով, որ ռասայական սահմանները ազգային սահմանների հետ չեն համընկնում, և երկրորդ՝ անհնարին է ռասաներն առանձնացնել ըստ հոգեկան հատկանիշների: Չի կարելի ասել, թե այդ դրույթները վերջնականապես ապացուցված են, բայց միանգամայն հավանական են:

3. Ազապտիվ մատեցում էթնիկական հոգեբանության պրոբլեմներին

էթնիկական հոգեբանության պրոբլեմների, հատկապես ազգային կերտվածքի և բնավորության ուսումնասիրության գործում, մեր կարծիքով, լուրջ արդյունքների կարելի է հասնել անձի և խմբերի սոցիալ-հոգեբանական ազապտացիայի տեսության դրույթներն ու նվաճումները կիրառելու դեպքում⁹:

Ազգային հոգեբանության խնդիրների վերլուծության համար հատկապես կարևոր են աղապտացիայի տեսության հետևյալ դրույթները. ա) անձի և խմբերի առջև հարմարվելու (աղապտացիայի) խնդիր ծագում է այն դեպքում, երբ նրանք հայտնվում են դժվարին պրոբլեմային իրադրություններում (զրկանքներ, կոնֆլիկտներ, ֆրուստրացիաներ և սթրեսներ, կամ պարզապես այնպիսի դժվար խնդիրներ, որոնց լուծումները դեռ հայտնի չեն), բ) աղապտացիան իրագործվում է պաշտպանական և ոչ պաշտպանական մի շարք մեխանիզմների օգնությամբ: Ծթե անձի կամ խմբի վարքում գերակշռում են պաշտպանական մեխանիզմները (պաշտպանական ագրեսիա, ռացիոնալիզացիա, ատրիբուցիա, պրոյեկցիա, սուբլիմացիա և այլն), ապա գործ ունենք պաշտպանական աղապտացիայի հետ: Հակառակ դեպքում անձը կամ խումբը իրագործում են ոչ պաշտպանական աղապտացիա (նոր նպատակադրում, պրոբլեմային իրադրության և խնդիրների լուծման ռացիոնալ եղանակների որոնում և այլն), գ) նույնանման պրոբլեմային իրադրություններում հարմարվելու հետևանքով անձը ձեռք է բերում աղապտիվ բարդույթներ (կոմպլեքսներ) և ստրատեգիաներ, որոնք դառնում են նրա բնավորության ենթակառուցվածքներ:

Աղապտացիայի տեսության այս և մի շարք այլ սկզբունքային դրույթներ կարելի է արդյունավետորեն կիրառել էթնիկական հոգեբանության առնվազն մի քանի խնդիրներ վերլուծելու նպատակով, որոնցից կարող ենք հիշատակել հետևյալները. ա) Յուրաքանչյուր ազգ կամ էթնիկական այլ խումբ ունի խլմբային բնավորություն և անհատների բնորոշ տիպեր, որոնք բազմաթիվ սերունդների ընթացքում տեղի ունեցած աղապտիվ գործընթացների արդյունք են: Դրանք կազմված են աղապտիվ մեխանիզմներից, բարդույթներից և ստրատեգիաներից: բ) Ամեն մի էթնիկական խումբ ունի իր անցյալն ու մշակույթը: Վեհացնելու (սուբլիմացնելու) հակում, որը խմբային ինքնապաշտպանության և ինքնահաստատման ձևերից մեկն է: Ծթե ազգը կամ էթնիկական այլ խումբ իրական մեծ նվաճումներ չունի, ապա նրա սուբլիմացիան կարող է ընդունել օթստաբանական ձևեր: գ) էթնիկական խմբերն ունեն արեսիվության տարբեր մակարդակ և արեսիվ գործողությունների մոտիվացիայի ու դրսևորումների տարբերություններ: Որոշ էթնիկական խմբեր միջէթնիկական կոնֆլիկտներ լուծելիս հիմնականում օգտվում են արեսիվայի տարբեր տեսակներից: Դա հաճախ հաջողության է հասնում, բայց հայտնի է նաև, որ պատմության ընթացքում որոշ գերարեսիվ ազգեր անհետացել են: Այլ ազգերի շրջանում արեսիան կարող է հիմնականում ներխմբային բնույթ ստանալ: դ) Ազգային հոգեբանության շրջանակներում անհրաժեշտ է խոր ուսումնասիրության ենթարկել տվյալ ազգային միջավայրում բնդունված ավանդական կառավարման ոճերն ու դրանց ազդեցությունը ազգային հոգեբանության ձևավորման ընթացքի վրա: ե) էթնոսի հոգեկան կերտվածքի և հատկապես բնավորության մեջ մտնող և առավել ակտիվորեն օգտագործվող հոգեբանական մեխանիզմներից են պրոյեկցիան և ատրիբուցիան, որոնց օգնությամբ այլ ազգերի ներ-

⁹ Ավելի մանրամասն տե՛ս А. А. Налчаджян. Социально-психическая адаптация личности; формы, механизмы и стратегии. Ереван, 1988:

կայացուցիչներին վերագրվում են դրական կամ բացասական գծեր՝ կախված այդ պաշտպանական մեխանիզմներն օգտագործող մարզկանց մտաբովանդակից: Բացասական վերագրումներ կատարելը վարկաբեկում է զոհին, իսկ դա հեշտացնում է նրա նկատմամբ ադրեսիայի և վանդալիստական գործողությունների կիրառումը: Հիշյալ մեխանիզմներին հաճախ միանում է նաև ուսցիոնալիզացիան, որն ընդունում է անհատական և խմբային ինքնարդարացման և ստախոսության ձևեր: զ) Ազգային սիմվոլները ստեղծվում են որպես սուբլիմացիայի, ազգային հոգեկանի ինքնաճանաչման և ինքնահաստատման մեխանիզմներ: Ահա թե ինչու ազգամիջյան կոնֆլիկտների ընթացքում հակառակորդի ազգային սիմվոլների վարկաբեկումն ու սեփական էթնոսի սիմվոլների փառաբանումը սովորական և ադապտիվ գործողություններ են: է) Ինչպես ասացինք, ազգային հոգեբանության կարևորագույն մասն է կազմում նաև ազգի Խ-կոնցեպցիան (պատկերացումների և գնահատականների այն համակարգը, որը վերաբերում է իրեն՝ տվյալ էթնոսին և տպավորվում ու սյահվում է նրա առավել գիտակից և էթնոսի հետ հոգեբանական նույնացում ունեցող անձնավորությունների հոգեկանում, հիշողության մեջ): Ծս-կոնցեպցիան խոր ու նուրբ ազդեցություններ է գործում և անհատների, և խմբերի վարքի վրա: Ընդ որում, ինչպես ցույց ենք տվել վերը հիշատակված աշխատության մեջ, մարդու Խ-կոնցեպցիան ամբողջությամբ ադապտիվ կազմավորում է և իր մեջ ունի ադապտիվ բարդություններ: Այսպես, եթե որևէ էթնիկական խումբ գերզգայուն է օտարների գնահատականների նկատմամբ, ապա կարելի է ասել, որ նրա Խ-կոնցեպցիան ունի ինքնապաշտպանական միտվածություն և էթնոսի ամբողջությամբ վերցրած ֆրոնտալացված է:

Ահա ադապտացիայի տեսության այն հիմնական գաղափարներից մի քանիսը, որոնք մեզ թույլ են տալիս էթնոհոգեբանության բնագավառում ոչ միայն համակարգել առաջադրված գաղափարներն ու հավաքված փաստերը, այլև նոր վարկածներ ու կոնցեպցիաներ առաջադրել՝ մատնանշելով հետազոտությունների նոր ուղղություններ:

А. А. НАЛЧАДЖЯН—Задачи этнопсихологии с позиций теории адаптации.—В статье рассматриваются основные проблемы и методы этнопсихологии—науки, которая формируется на стыке социальной психологии, психологии личности, социологии, этнографии и других наук. Описываются основные критерии выделения этнических групп, особенно наций, главные направления современных этнопсихологических исследований. Объясняются понятия «этнический склад», «этнический характер» и другие. Автор, опираясь на разработанную им теорию социально-психической адаптации личности и групп, предлагает новый «адаптивный» подход к анализу этнопсихологических проблем (этнического характера, роли сублимации в процессе формирования этнического самосознания и др.). Такой подход открывает новые перспективы этнопсихологических исследований.